Իններորդ հաղորդում

Եկեղեցու՝ որպես Քրիստոսի Մարմնի օրգանական կառուցումը հոգևոր նյութափոխանակական գործընթացի շնորհիվ՝ ըստ հավատացյալների՝ ներբնակվող Քրիստոսին ներքուստ փորձառաբար ապրելու

Գրվածքների ընթերցում. Բ Թգ 7:12-14ա, Եփս 3:16-21

I. Բ Թգ 7:12-14ա-ն նախատիպերի միջոցով տրված մարգարեության բացահայտումն է, որը ցույց է տալիս մեր կարիքը, որ Աստված Քրիստոսին ներկառուցի մեր խորքային կազմության մեջ, որպեսզի մեր ողջ էությունը Քրիստոսով վերակազմավորվի՝ Մտթ 16:18.

Ա. Աստծու հավիտենական տնտեսությունը, ըստ Իր սրտի ցանկության, այն է, որ Իրեն ներկառուցի մարդու մեջ և մարդուն ներկառուցի Իր մեջ (Եփս 3:16-17ա). այս փոխադարձ կացարանը Քրիստոսի Մարմնի իրականությունն է, որն ավարտունանում է Նոր Երուսաղեմում՝ Հվի 15:4-5ա, Ա Հվի 2:27-28, 3:24, 4:13, 15-16, Հյտ 21:3, 22:

Բ. Իր տնտեսությունում Աստված մտադիր է Իրեն Քրիստոսի մեջ ներկառուցել մեր էության մեջ՝ Բ Թգ 7:12-14ա, Եփս 3:17ա, Հվի 14:20, Գղտ 4:19.

1. Աստված ուզում է Իրեն Քրիստոսի մեջ ներդնել մեր մեջ. այն ամենը, ինչ Քրիստոսն է, և այն ամենը, ինչ Քրիստոսը կատարել է, սրա համար է՝ Փլպ 2:13, Եփս 3:17ա, Կղս 3:10-11:
2. Մեզ անհրաժեշտ է, որ Աստված Իրեն Քրիստոսի մեջ ներկառուցի մեր մարդկայնության մեջ՝ Քրիստոսի մեջ Իրեն ներդնելով մեր մեջ որպես մեր կյանքը, մեր բնությունը և մեր անձը՝ Եփս 3:17ա:

II. Եփս 3:16-21-ը բացահայտում է, որ Եռամեկ Աստված մտել է մեր մեջ՝ Իրենով՝ որպես տարրով, ինչպես նաև մեզնից՝ որպես նյութից եղող ինչ-որ բանով կառուցման աշխատանք կատարելու համար. սա պատկերված է Մտթ 13-րդ գլխի սերմնացանի առակում.

Ա. Տերն Իրեն՝ որպես կյանքի սերմի, սերմանում է մարդկանց սրտերում՝ հողում, որպեսզի նրանց մեջ աճի ու ապրի և նրանց ներսից արտահայտվի՝ խ. 3:

Բ. Սերմը սերմանվում է հողի մեջ, որպեսզի հողի սննդանյութերով աճի. արդյունքում բերքը կազմված է և՛ սերմի, և՛ հողի տարրերից ՝ խ. 23:

Գ. Մեր ներսում որոշակի սննդանյութեր կան, որոնք Աստված ստեղծել է որպես նախապատրաստություն Իր՝ մեր մեջ մտնելու և աճելու համար. Աստված ստեղծել է մարդկային հոգին՝ մարդկային սննդանյութերով հանդերձ, ինչպես նաև մարդու սիրտը՝ որպես հող, որպեսզի աստվածային սերմը մեր ներսում աճի՝ Ա Հվի 3:9, Ա Պտ 1:23, Կղս 2:19.

1. Այն արագությունը, որով մենք կյանքում աճում ենք, ոչ թե աստվածային սերմից է կախված, այլ այն բանից, թե որքան սննդանյութ ենք

այս սերմին տալիս. որքան շատ սննդանյութ մատակարարենք, այնքան սերմն ավելի արագ կաճի և այնքան ավելի կծաղկի՝ Սղմ 78:8, Մտթ 5:3, 8.

ա. Եթե մենք մնանք մեր շնչում՝ մեր բնական մարդու մեջ, աստվածային սերմի աճի համար որևէ սննդանյութ չի լինի. բայց եթե ներամրապնդվենք մեր ներքին մարդու մեջ և եթե ուշադրություն դարձնենք մեր հոգուն ու վարժենք մեր հոգին, սննդանյութերը կմատակարարվեն, և Քրիստոսն Իր տունը կհաստատի մեր սրտում՝ Եփս 3:16-17, Հռմ 8:6, Ա Տմթ 4:7:

բ. Եթե մենք պատրաստվում ենք Տիրոջը՝ որպես կյանքի սերմի, աճեցնել մեր ներսում, որպեսզի Նա մեր լիարժեք վայելքը լինի, պետք է բացարձակապես բաց լինենք Տիրոջ համար և համագործակցենք Նրա հետ, որպեսզի մանրակրկիտ ներգործության ենթարկենք մեր սիրտը՝ Մտթ 13:3-9, 19-23:

2. Մի կողմից՝ Աստված մեզ զորացնում է Իրենով՝ որպես տարրով, իսկ մյուս կողմից՝ մենք տրամադրում ենք սննդանյութերը. այս երկու բանի միջոցով Աստված Քրիստոսի մեջ իրագործում է Իր խորքային կառուցումը, Իր տան կառուցումը մեր ողջ էության մեջ:

Դ. Աստվածաշնչի համաձայն՝ աճը հավասարազոր է կառույցին. Տեր Հիսուսը հռչակեց. «Ես կկառուցեմ Իմ եկեղեցին» (Մտթ 16:18). այս կառուցումը տեղի է ունենում մեր ներսում աստվածային սերմի աճելով՝ Ա Հվի 3:9, Եփս 4:15-16, Կղս 2:19, Եփս 2:21-22, Ա Կրթ 3:1, 6-9, 12, 16:13:

Ե. Աստծու տնտեսությունն այն է, որ Նա Իրեն ներդնում է մեր մեջ, որպեսզի մենք փորձառաբար ապրենք հոգևոր մարսողության և յուրացման նյութափոխանակական գործընթացը, որն առաջացնում է փոխակերպում՝ որպես մեր բնական կյանքում աստվածային կյանքով նյութափոխանակության աստիճանական և խորքային փոփոխություն. սա Քրիստոսի Մարմնի կառուցման համար է, որը կավարտունացնի Նոր Երուսաղեմը՝ Բ Կրթ 3:18.

1. Որպեսզի Աստծու կառուցումը տեղի ունենա, մենք պետք է ընդունենք, մարսենք և յուրացնենք օրգանական, պնևմատիկ Քրիստոսին, ով կենդանարար Հոգին է՝ որպես մեր հոգևոր սնունդը, ըմպելիքը և շնչառությունը՝ Հվի 6:51, 57, 7:37-39, 20:22:

2. Երբ մենք վայելում ենք Քրիստոսին՝ ուտելով, խմելով և շնչելով Նրան, մեր ներսում նյութափոխանակական գործընթաց, հոգևոր մարսողություն և նյութափոխանակություն է տեղի ունենում, և Քրիստոսը դառնում է մեր էության կազմությունը. այս ներքին նյութափոխանակությունը փոխակերպումն է, իսկ փոխակերպումը՝ կառույցը՝ Հռմ 12:2, Փլպ 1:20-21, հմմտ Հյտ 21:18, 4:3:

Զ. Եկեղեցու՝ որպես Քրիստոսի Մարմնի օրգանական կառուցումը, որը տեղի է ունենում հոգևոր նյութափոխանակական գործընթացի միջոցով, իրականում այն է, ինչ Եհովան Բ Թգ 7:12-14ա-ում նախատիպերի միջոցով մարգարեացավ Դավթին:

III. Եփս 3:16-21-ում Պողոսն աղոթեց, որ հավատացյալները եկեղեցու՝ որպես Քրիստոսի Մարմնի օրգանական կառուցման համար փորձառաբար ապրեն ներբնակվող Քրիստոսին՝ 4:12, 16, 2:21-22.

Ա. Պողոսն աղոթեց Հորը, որպեսզի մենք Նրա Հոգու միջոցով ներամրապնդվենք ներքին մարդու մեջ, որի արդյունքում Քրիստոսը կարող էր Իր տունը հաստատել մեր սրտում և դրանով իսկ Իրենով զբաղեցնել, տիրել մեր ողջ ներքին էությանը, ներթափանցել դրա մեջ ու հագեցնել այն՝ 3:16-17ա:

Բ. Եռամեկ Աստծուն կարելի է նմանեցնել մի մեծ մեխանիզմի, որը վարողը Պողոսն էր. մենք պետք է մի դաս սովորենք, այն է՝ ողջ տիեզերքում մի բարձր սկզբունք կա. այս սկզբունքն այն է, որ Աստված ուզում է ինչ-որ բան անել, բայց Նա միայն «մեխանիզմը» կլինի, և Նա կարիք ունի, որ ինչ-որ մեկը լինի այն վարողը.

1. Երբ Պողոսն աղոթեց Եփս 3:16-21-ի աղոթքով, նա Քրիստոսի ամբողջ Մարմնի ներկայացուցիչն էր:
2. Հայրը, Որդին և Հոգին այս տիեզերական «մեխանիզմի» երեք «մասերն» են, իսկ Մարմինը՝ դրա վարողը. երբ մենք՝ որպես վարողը, այս աղոթքն ենք անում, Հայրն Իր Հոգու՝ որպես հոսքուղու միջոցով աշխատում է, որպեսզի մեր ներքին էության յուրաքանչյուր մասը ներամրապնդի ներքին մարդու մեջ, որպեսզի նպատակը՝ Որդին, կարողանա Իր տունը հաստատել մեր սրտի բոլոր մասերում:

Գ. Ասելը, որ մենք պետք է զորությամբ ներամրապնդվենք ներքին մարդու մեջ, ցույց է տալիս, որ մենք ներքին մարդու մեջ չենք, որ հիմնականում արտաքին մարդու մեջ ենք ապրում՝ խ. 16, 1:19-22, 3:20:

Դ. Քրիստոսն ուզում է զբաղեցնել մեր սրտի յուրաքանչյուր սենյակ.

1. «Իր տունը հաստատի» արտահայտությունը հունարենում միայն մի բառ է՝ «կատոյկեո», որը հիմնականում նշանակում է բնակվել բնակարանում, բնակատեղ պատրաստել, իսկ այս բառի նախածանցը՝ «կատա»-ն, նշանակում է «ներքև»՝ խ. 17ա:
2. Երբ Քրիստոսն Իր տունն է հաստատում՝ խորանալով մեր սրտերի մեջ, մենք Աստծու անդաստանի համար արմատավորվում ենք սիրո մեջ և Աստծու կառույցի համար՝ հիմնավորվում սիրո մեջ՝ խ. 17:
3. Երբ Նա մեր սրտերում Իր տունը հաստատի, մենք կարող կլինենք բոլոր սրբերի հետ ըմբռնելու անչափելի Քրիստոսին, որի չափերը տիեզերքի չափերն են՝ խ. 18.
   ա. Եկեղեցում Քրիստոսի մեր փորձառությունը պետք է խորանարդի պես եռաչափ լինի (լայնություն, երկարություն, բարձրություն և խորություն) և չպետք է գծի պես միաչափ լինի:
   բ. Ե՛վ խորանում, և՛ տաճարում Սրբությունների Սրբությունը խորանարդ էր՝ Ելց 26:2-8, Ա Թգ 6:20:
   գ. Ի վերջո Նոր Երուսաղեմը՝ Աստծու կառույցը, կդառնա հավիտենական խորանարդ՝ Սրբությունների Սրբությունը, երեք չափումներում տասներկու հազարական ասպարեզ՝ Հյտ 21:16:

4. Այն, որ Քրիստոսնն Իր տունն է հաստատում մեր սրտերում, մեզ մղում է ճանաչելու Քրիստոսի սերը, որ գիտությունից գերազանց է, որպեսզի մենք Եռամեկ Աստծու ընդհանրական արտահայտության, Նրա փառավորման համար լցվենք մինչև Նրա ողջ լեցունությունը՝ Եփս 3:19-21, հմմտ Ծնդ 24:47, 53, 61-67:

Ե. Քրիստոսը եկեղեցին կառուցում է Իրեն մեր մեջ ներկառուցելով, այսինքն՝ մտնելով մեր հոգու մեջ և մեր հոգուց տարածվելով մեր մտքի, զգացմունքների և կամքի մեջ, որպեսզի զբաղեցնի մեր ողջ էությունը՝ Բ Տմթ 4:22, Ա Կրթ 6:17, Եփս 3:17ա.

1. Քանի որ մեր սիրտը մեր ներքին մասերի ամբողջությունն է, մեր ներքին էության կենտրոնը և մեր հակման, գորովի, հաճության և բաղձանքի առնչությամբ մեր ներկայացուցիչը, երբ Քրիստոսն Իր տունն է հաստատում մեր սրտում, Նա կառավարում է մեր ողջ ներքին էությունը և մատակարարում ու Իրենով ամրացնում ամեն ներքին մաս:
2. Որքան շատ է Քրիստոսը տարածվում մեր ներսում, այնքան շատ է բնակվում մեր մեջ և Իր տունը հաստատում մեր մեջ՝ զբաղեցնելով մեր ներքին էության ամեն մի մաս՝ տիրելով այս բոլոր մասերին և դրանք հագեցնելով Իրենով:
3. Որպեսզի Մտթ 16:18-ում եկեղեցու կառուցման վերաբերյալ Քրիստոսի ասածն իրագործվի, եկեղեցին պետք է հասնի մի վիճակի, որտեղ շատ սրբեր թույլ կտան Քրիստոսին Իր տունը հաստատել իրենց սրտի խորքում՝ տիրելով իրենց ողջ ներքին էությանը, զբաղեցնելով ու հագեցնելով այն:
4. Որքան շատ Քրիստոսը զբաղեցնի մեր ներքին էությունը, այնքան շատ մենք ի վիճակի կլինենք Մարմնում կառուցվելու ուրիշների հետ՝ Եփս 2:21-22, 4:12, 16:
5. Եփս 3:17-ը խոսում է սիրո մեջ արմատավորվելու և հիմնավորվելու մասին. մեր արմատավորվելը ցույց է տալիս, որ մենք բույսեր ենք, որոնք պետք է աճեն, իսկ մեր հիմնավորված լինելը նշանակում է, որ մենք պետք է կառուցվենք:
6. 18-րդ խոսքի համաձայն՝ մենք ի վերջո ի զորու ենք ըմբռնելու Քրիստոսի տիեզերական չափերը՝ լայնությունը, երկարությունը, բարձրությունը և խորությունը, ոչ թե ինքնուրույն, անհատապես, այլ «բոլոր սրբերի հետ», այսինքն՝ ընդհանրականորեն և միահամուռ. սա բացահայտում է, որ մենք պետք է համակառուցվենք:
7. Երբ Քրիստոսն Իր տունը հաստատի մեր սրտերում, մենք կլցվենք մինչև Աստծու ողջ լեցունությունը. այս լեցունությունը եկեղեցին է՝ Քրիստոսի Մարմինը՝ որպես Եռամեկ Աստծու ընդհանրական արտահայտություն՝ խ. 19:
8. Աստծու փառքը ներդրվում է եկեղեցու մեջ, և Նա եկեղեցու միջոցով արտահայտվում է այն ամենից ավելի, ինչ մենք խնդրում կամ

խորհում ենք. հետևաբար Աստված փառավորվում է եկեղեցում՝ խխ. 20-21:

Զ. Եփս 3:16-21-ը ցույց է տալիս Պողոսի հոգին, դիրքորոշումը, աղոթքը և հավատքը.

1. Հայտնությամբ Քրիստոսի խորհուրդը հայտնի դարձավ Պողոսին (խխ. 3-6). ուստի նրա հոգին և դիրքորոշումը, այն է՝ ինչ նա տեսավ, ինչ ասաց և ինչի համար իր սրտում հոգում էր, կապված էին ներբնակվող Քրիստոսին ներքուստ փորձառաբար ապրելու միջոցով եկեղեցու՝ որպես Քրիստոսի Մարմնի կառուցման տեսության հետ:
2. Պողոսը տարված էր այս տեսությամբ, և այն դարձել էր նրա հոգին ու դիրքորոշումը. հետևաբար նա Եփս 3:16-21-ում գրառված այդպիսի աղոթք արեց (հավատքի ոլորտում և տարրում). եթե մենք տեսել ենք այն տեսությունը, թե ինչպես է Քրիստոսն այն բանի միջոցով, որ մենք ներքուստ փորձառաբար ապրում ենք ներբնակվող Քրիստոսին, կառուցում եկեղեցին՝ որպես Քրիստոսի Մարմինը, մենք կունենանք Պողոսի հոգին, դիրքորոշումը, աղոթքը և հավատքը, երբ եկեղեցում ծառայենք Աստծուն:

© 2021 Living Stream Ministry